

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2017 թ. սեպտեմբերի 19-ին կայացած թիվ 1 նիստի**

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին ներկա էին 29-ը:

*Օրակարգում՝*

- Տեղեկատվություն 2017-2018 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ
- Տեղեկատվություն բակալավրիատի նոր կրթական ծրագրերի լրամշակման վերաբերյալ
- Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը
  
- **Տեղեկատվություն 2017-2018 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանի հաղորդումը 2017-2018 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության վերաբերյալ: Նա նշեց, որ 2017-2018 ուս. տարում կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքները հետևյալն են.

**Բակալավրիատ՝**

Կենսաբանություն մասնագիտություն՝ 41 ուսանող,

Կենսաքիմիա մասնագիտություն՝ 28 ուսանող,

Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա մասնագիտություն՝ 14 ուսանող:

**Մագիստրատուրա՝**

Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա՝ 17 ուսանող,

Կենսաինֆորմատիկա՝ 7 ուսանող,

Կենսաֆիզիկա՝ 5 ուսանող

Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա՝ 14 ուսանող,  
Գենետիկա և բջջաբանություն՝ 9 ուսանող,  
Կենդանաբանություն և մակաբուժաբանություն՝ 6 ուսանող:

- **Տեղեկատվություն ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգի մասին**

ԼՍԵՑԻՆ՝ դեկան Է.Ս.Գևորգյանին: Նա հիշեցրեց, որ ԵՊՀ-ում 2017-2018 թ.-ից գործելու է ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման նոր կարգ, որի մասին ԵՊՀ աշխատողները կարող են մանրամասն ծանոթանալ <http://documentation.y-su.am> կայքից :

- **Տեղեկատվություն բակալավրիատի նոր կրթական ծրագրերի լրամշակման վերաբերյալ**

ԼՍԵՑԻՆ՝ բակալավրիատի նոր ծրագրերի մշակման հայտերի հարցը :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հայտերի գնահատման և ծրագրերի հետագա մշակումն արտոնելու համար ԵՊՀ Որակի ապահովման կենտրոն ներկայացնել հետևյալ ծրագրերը.

1. Կենսաբանություն
2. Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա
3. Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա

- **Անվանական կրթաթոշակների շնորհման հարցը**

ԼՍԵՑԻՆ՝ Լևոն Օրբելու և Նորայր Միսակյանի անվան անվանական կրթաթոշակներիի շնորհման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով բարձր առաջադիմությունը և ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին՝

Նորայր Սիսակյանի անվան կրթաթոշակը շարունակել հատկացնել կենսաբանության մասնագիտության չորրորդ կուրսի ուսանող Սահակ Աշոտի Եղիազարյանին, իսկ Լևոն Օրբելու անվան կրթաթոշակը հատկացնել կենսաբանության մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Տաթևիկ Ստեփանյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ.անդամ, պրոֆ.



Է.Ս.Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դոցենտ



Ա.Ֆ.Կարապետյան